

«2016թ. լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի վեցերորդ փուլի հարցաշարի պատասխանը

ՀԱՐՑ 1

ԱԱՀ վճարող կազմակերպությունը ՀՀ-ում չգրանցված ֆիզիկական անձից անշարժ գույք վարձակալության գործարքի մասով ԱԱՀ գումարը ինչպես է հաշվարկվում, եթե վարձավճարը յուրաքանչյուր ամսվա համար կազմում է 120.000 ՀՀ դրամ՝

ա) Տվյալ գործարքի մասով ՀՀ-ում չգրանցված ֆիզիկական անձը ԱԱՀ պարտավորությունը հաշվարկում է ինքնուրույն ՀՀ կառավարության 19.02.1999թ. N199-Ն որոշմամբ սահմանված կարգով.

բ) կազմակերպությունը որպես հարկային գործակալ հաշվարկում և պահում է ԱԱՀ գումարը հաշվի առնելով գույքի արժեքի հավելվածը.

գ) կազմակերպությունը որպես հարկային գործակալ ԱԱՀ պարտավորությունը հաշվարկում է 20 տոկոս դրույքաչափի կիրառմամբ.

դ) տվյալ գործարքի մասով ԱԱՀ գծով պարտավորություն չի առաջանում ինչպես ՀՀ-ում չգրանցված անձի մոտ, այնպես էլ կազմակերպության մոտ՝ որպես հարկային գործակալ:

ՀԱՐՑ 2

ՌԴ ռեզիդենտ համարվող փոխադրողը ՀՀ ռեզիդենտ համարվող ընկերության պատվերով ԵՏՄ շրջանակներում ավտոմոբիլային տրանսպորտով իրականացնում է բեռնափոխադրում ՌԴ-ից ՀՀ տարածք (ֆրախտի ծառայություններ): Ո՞ր արժեքից և ի՞նչ դրույքաչափով պետք է հաշվարկվի ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարը, եթե ՌԴ ռեզիդենտի կողմից ՀՀ ռեզիդենտ ընկերությանը ներկայացվել է հաշիվ-ապրանքագիր՝ հետևյալ բովանդակությամբ՝

Ծառայության անվանումը	Արժեքը (ԱՄՆ դոլար)
Ֆրախտի ծառայություն Մոսկվա-ՀՀ սահման	3000
Ֆրախտի ծառայություն ՀՀ սահման-Ք. Երևան	500
Ընդամենը	3500

ա) տվյալ գործարքը ենթակա չէ շահութահարկով հարկման.

բ) քանի որ գործարքը իրականացվում է ԵՏՄ շրջանակներում, հետևաբար ենթակա է հարկման միայն Վրաստանի տարածքով իրականացվող ֆրախտի մասնաբաժինը, բայց հաշվի առնելով այն, որ այդ հաստիքը տարանջատված չէ, ուստի անհրաժեշտ է հարկել ամբողջ արժեքը՝ 5 տոկոս դրույքաչափի կիրառմամբ.

գ) ենթակա է հարկման 500 ԱՄՆ դոլարը 5 տոկոս դրույքաչափի կիրառմամբ.

դ) անկախ ՌԴ ռեզիդենտի կողմից դուրս գրված հաշիվ-ապրանքագրում ծառայությունը տարանջատելու հանգամանքից գործարքի ամբողջ 3.500 ԱՄՆ դոլար ենթակա է հարկման 10 տոկոս դրույքաչափի կիրառմամբ:

ՀԱՐՑ 3

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում գրանցված ռեզիդենտ կազմակերպության կողմից ՀՀ ռեզիդենտ կազմակերպությանը մատակարարվում են ապրանքներ՝ 25.000 ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով: Նշված գործարքի մասով 23.03.2016թ. կնքվել է գրավոր պայմանագիր, որում ապրանքների սեփականության իրավունքի անցման վերաբերյալ դրույթներ սահմանված չեն: Ընդ որում՝ նշված գործարքի մասով ՀՀ ռեզիդենտ կազմակերպության անունով 27.03.2016թ. դուրս է գրվում հաշիվ-ապրանքագիր, իսկ ապրանքները ՀՀ տարածք են ներմուծվում 04.04.2016թ.: Նշված ներմուծման գործարքը ձևակերպվում է «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով, որի գծով մաքսային հայտարարագիրը կազմվում է 10.04.2016թ., իսկ մաքսային արժեքն է՝ 14.250.000 ՀՀ դրամ:

Ինչպե՞ս պետք է հաշվարկել ոչ ռեզիդենտի շահութահարկի գումարը, եթե ՀՀ կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ հրապարակված ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը կազմել է հետևյալ չափով՝

Ամսաթիվ	1 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ
23.03.2016	479.93
27.03.2016	482.16
04.04.2016	481.66
10.04.2016	475

ա) $25.000 \times 479.93 \times 10\%$.

բ) $25.000 \times 482.16 \times 10\%$.

գ) $25.000 \times 481.66 \times 20\%$.

դ) $14.250.000/475 \times 20\%$:

ՀԱՐՑ 4

Կազմակերպությունը 01.04.2015թ. ձեռք է բերել հիմնական միջոց՝ 12.000.000 ՀՀ դրամ արժեքով, որի ամորտիզացիայի տարեկան առավելագույն տոկոսադրույքը 15 տոկոս է: Ընդ որում՝ տվյալ խմբում ներառված է միայն ձեռքբերված հիմնական միջոցը: Որքան կկազմի 2016թ. համար նշված հիմնական միջոցի համար հաշվարկվող ամորտիզացիայի գումարը, եթե կազմակերպությունը 2015թ. ընթացքում համարվել է շրջանառության հարկ վճարող՝

ա) $1.597.500 ((12.000.000 - 12.000.000 * 11.25\% (15/12 * 9)) * 15\%)$.

բ) $1.800.000 (12.000.000 * 15\%)$.

գ) $1.530.000 ((12.000.000 - 12000000 * 15\%) * 15\%)$:

ՀԱՐՑ 5

ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունը 2015թ. ընթացքում ձեռք է բերել շահագործման ժամկետ ունեցող գույք 9.600.000 ՀՀ դրամով (ներառյալ՝ ԱԱՀ), որն ի սկզբանե օգտագործվել է արտոնագրային վճարով հարկվող գործունեության համար: 08.08.2016թ. կազմակերպությունը օտարում է տվյալ հիմնական միջոցը՝ 6.000.000 ՀՀ դրամով (ներառյալ՝ ԱԱՀ): Ընդ որում՝ շահագործման ժամկետ ունեցող գույքի սկզբնական արժեքների հանրագումարում տվյալ ձեռքբերված գույքի սկզբնական արժեքի տեսակարար կշիռը կազմում է 60 տոկոս, իսկ 01.01.2016թ. հունվարի 1-ի

դրությամբ շահագործման ժամկետ ունեցող գույքի այդ խմբի հաշվեկշռային արժեք կազմել է 17.000.000 ՀՀ դրամ:

Որքա՞ն է կազմում գույքի ձեռքբերման մասով վճարված ԱԱՀ գումարի վերաձևակերպվող (հաշվանցման ենթակա գումարներին ավելացվող) մասը՝

ա) 3.400.000 ($17.000.000 \cdot 20\%$).

բ) 1.700.340 ($17.000.000 \cdot 60\% \cdot 16.67\%$).

գ) 800.000 ($9.600.000 \cdot 16.67\%$).

դ) 960.192 ($9.600.000 \cdot 60\% \cdot 16.67\%$):

ՀԱՐՑ 6

ԱԱՀ վճարող համարվող ՀՀ կազմակերպությունը զբաղվում է հումքային ապրանքների արդյունահանմամբ: Արդյունահանված մետաղի հումքը, համաձայն հումքի վերամշակման պայմանագրի, 10.09.2016թ. ուղարկվում է Բելոռուսիայի Հանրապետություն՝ վերամշակման նպատակով: Հումքի սկզբնական արժեքը կազմել է 55.000.000 ՀՀ դրամ, հումքի վերամշակման աշխատանքների արժեքը՝ 10.000.000 ՀՀ դրամ, իսկ այն վերամշակվելուց հետո՝ 74.000.000 ՀՀ դրամ: Վերամշակված հումքը ՀՀ տարածք է ներմուծվել 28.11.2016թ.:

Տվյալ գործարքի համար ՀՀ կազմակերպության կողմից ի՞նչ փաստաթղթեր են ներկայացվում հարկային մարմին, և ինչպե՞ս է որոշվում վերամշակված հումքի հարկման բազան՝

ա) արտահանման հարկային հայտարարագիր, իսկ հարկման բազան 55.000.000 ՀՀ դրամ.

բ) ներմուծման հարկային հայտարարագիր և անուղղակի հարկերի վճարման վերաբերյալ ներմուծողի կողմից լրացրած և ներմուծման երկրի հարկային մարմնի կողմից հաստատված հայտարարություն, իսկ հարկման բազան 74.000.000 ՀՀ դրամ.

գ) տվյալ դեպքում հարկային մարմին փաստաթղթեր չեն ներկայացվում և հարկման բազա չի որոշվում, քանի որ սեփականության իրավունքի փոփոխություն չի կատարվել.

դ) ներմուծման հարկային հայտարարագիր և անուղղակի հարկերի վճարման վերաբերյալ ներմուծողի կողմից լրացրած և ներմուծման երկրի հարկային մարմնի կողմից հաստատված հայտարարություն, իսկ հարկման բազան 10.000.00. ՀՀ դրամ:

ՀԱՐՑ 7

Շրջանառության հարկ վճարող համարվող անհատ ձեռնարկատերը արտադրում է խոհարարական արտադրանք: Ընթացիկ տարվա 1-ին եռամսյակի ընթացքում արտադրված արտադրանքի 50 տոկոսը սպառվել է սպառման համար նախատեսված սպասարկման սրահում, իսկ մնացած 50 տոկոսը վաճառվել է: Միաժամանակ արտադրված խոհարարական արտադրանքի հետ իրացվում են նաև ձեռքբերված զովացուցիչ ըմպելիքները (coca-cola, sprite, fanta): Ընդ որում՝ ձեռքբերված ամբողջ զովացուցիչ ըմպելիքները 50/50 տոկոս համամասնությամբ սպառվել են համապատասխանաբար սպասարկման սրահում սպառվող խոհարարական արտադրանքի և իրացվող արտադրանքի հետ, իսկ դրանց գծով շահութաբերության նորմը կազմել է 5 տոկոս: Տվյալ խմիչքների ձեռքբերման գծով էլեկտրոնային եղանակով դուրս են գրվել հարկային հաշիվներ:

Որքա՞ն է կազմում 1-ին եռամսյակի շրջանառության հարկի գումարը, եթե՝

- 1) Սպասարկման սրահում սպառված խոհարարական արտադրանքի հասույթը կազմել է 2.000.000 ՀՀ դրամ,
- 2) Վաճառած խոհարարական արտադրանքի հասույթը՝ 1.500.000 ՀՀ դրամ,
- 3) Վաճառված զովացուցիչ ըմպելիքների հասույթը՝ 400.000 ՀՀ դրամ:

ա) 58.214.28 (1.500.000*3.5%+380.952*1.5%).

բ) 28.500 ((1.500.000+400.000)*1.5%).

գ) 136.500 ((2.000.000+1500.000+400.000)*3.5%).

դ) 65.833 ((1.500.000+380.952)*3.5%):

ՀԱՐՑ 8

ԱԱՀ վճարող համարվող կազմակերպությունը ընթացիկ տարվա երկրորդ եռամսյակի ընթացքում ձեռք է բերել 1000 կգ շինարարության մեջ օգտագործվող պտուտակ, որի արժեքը կազմել է 50.000 ՀՀ դրամ, իսկ ԱԱՀ գումարը 10.000 ՀՀ դրամ:

Նշված եռամսյակի ԱԱՀ հաշվարկում 10.000 ՀՀ դրամը արտացոլվել է ԱԱՀ հաշվարկի դեբետային մասում, որպես հաշվանցման ենթակա գումար: 4-րդ եռամսյակում շահագործման հանձնելու ժամանակ դրանց 20 տոկոսի մոտ հայտնաբերվում է արտադրական խոտան, ինչը անհնարին է դարձնում տվյալ պտուտակների կիրառումը, ուստի այդ մասը վերադարձվում է մատակարարին:

Տվյալ դեպքում վերադարձված պտուտակների գործարքը ինչպե՞ս պետք է փաստաթղթավորվի և դրանց վերաբերող ԱԱՀ գումարը ո՞ր հաշվետու ժամանակաշրջանի ԱԱՀ հաշվարկում պետք է արտացոլվի՝

ա) անհրաժեշտ է նախօրոք դուրս գրված հարկային հաշիվը անվավեր ճանաչել, միաժամանակ ճշգրտել 2-րդ եռամսյակի ԱԱՀ հաշվարկը՝ պակասեցնելով հաշվանցված 10.000 ՀՀ դրամ ԱԱՀ գումարը.

բ) անհրաժեշտ է նախօրոք դուրս գրված հարկային հաշիվը չեղյալ ճանաչել, միաժամանակ ճշգրտել 2-րդ եռամսյակի ԱԱՀ հաշվարկը՝ պակասեցնելով հաշվանցված 10.000 ՀՀ դրամ ԱԱՀ գումարը.

գ) անհրաժեշտ է դուրս գրել ճշգրտող հարկային հաշիվ որտեղ կարտացոլվի 800 կգ պտուտակները, միաժամանակ 4-րդ եռամսյակի ԱԱՀ հաշվարկում պակասեցնել 200 կգ քաժին ընկնող ԱԱՀ գումարը՝ 2000 ՀՀ դրամի չափով.

դ) անհրաժեշտ է դուրս գրել ճշգրտող հարկային հաշիվ որտեղ կարտացոլվի 200 կգ պտուտակները, միաժամանակ 4-րդ եռամսյակի ԱԱՀ հաշվարկում պակասեցնել 200 կգ քաժին ընկնող ԱԱՀ գումարը՝ 2000 ՀՀ դրամի չափով:

ՀԱՐՑ 9

Կազմակերպության հիմնադիր ֆիզիկական անձը իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը վարձակալությամբ հանձնում է կազմակերպությանը: Վարձակալական գումարը կազմում է ամսական 55.000 ՀՀ դրամ, իսկ տվյալ գույքի գույքահարկի տարեկան գումարը 37.000 ՀՀ դրամ: Համաձայն պայմանագրի կազմակերպության կողմից գույքահարկի վճարման օրը ներառող ամսվա ընթացքում (դեկտեմբեր) հիմնադրին փոխհատուցվում է նաև գույքահարկի գումարը:

Ինչքան է կազմում կազմակերպության կողմից դեկտեմբեր ամսվա համար ֆիզիկական անձին վճարվող եկամուտներից որպես հարկային գործակալ պահվող եկամտային հարկի գումարը՝

ա) 5.500 ($55.000 \cdot 10\%$).

բ) 9.200 ($(55.000 + 37.000) \cdot 10\%$).

գ) 14.528 ($55.000 \cdot 10\% + 37.000 \cdot 24.4\%$).

դ) 22.448 ($(55.000 + 37.000) \cdot 24.4\%$):

ՀԱՐՑ 10

Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ հանդիսացող իրավաբանական անձի կողմից ընթացիկ տարում իրականացված արտադրական գործարքների իրացման շրջանառությունը մինչև 4-րդ եռամսյակը կազմել է 17.000.000 ՀՀ դրամ: Կազմակերպությունը գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող պայմանագրի հիման վրա 4-րդ եռամսյակում կնքում է ապրանքների մատակարարման պայմանագիր 55.000.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով (առանց ԱԱՀ), որից իրեն հասանելիք գումարը կազմում է վաճառված ապրանքների 2 տոկոսը:

Արդյոք տվյալ դեպքում առաջանում է շրջանառության հարկի և (կամ) ԱԱՀ-ի գծով պարտավորություն և եթե այո, ապա ինչ չափով:

ա) չի առաջանում հարկային պարտավորություն, քանի որ անձը համարվում է ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ.

բ) առաջանում է միայն ԱԱՀ-ի գծով պարտավորություն՝ 11.000.000 ՀՀ դրամի չափով ($55.000.000 \cdot 20\%$).

գ) առաջանում է շրջանառության հարկ՝ 54.000 դրամի չափով ($54.000.000 \cdot 2\% \cdot 5\%$) և ԱԱՀ-ի գծով 10.800.000 դրամի չափով ($54.000.000 \cdot 20\%$).

դ) առաջանում է միայն ԱԱՀ-ի գծով պարտավորություն՝ 10.800.000 դրամի չափով ($54.000.000 \cdot 20\%$):

«2016թ. լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի վեցերորդ փուլի խնդրի պատասխանը

Կազմակերպությունը հիմնադրվել է ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից 2013թ. հոկտեմբերի 23-ին: 2013-2014 թթ. ընթացքում կազմակերպության կանոնադրական կապիտալը համարվել է 300 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով, որից 200 մլն ԱՄՆ դոլարը ներգրաված վարկային միջոցների հաշվին, որի գծով տարեկան տոկոսագումարը կազմում է 10 տոկոս: Վարկային ծրագիրը մեկնարկել է 01.01.2014թ., իսկ դրա շրջանակներում ներգրավված վարկային միջոցների վերադարձը սկսվել է 2015թ.-ից՝ արտադրության մեկնարկման տարվանից: Ընդ որում՝ 2015թ. ընթացքում տոկոսների վճարման օր է սահմանված դեկտեմբերի 31-ը:

Կազմակերպությունը ստացած հանքարդյունահանման ուսումնասիրության թույլտվության հիման վրա 2013-2014թթ. ընթացքում կատարել է հանքարդյունահանման ուսումնասիրություններ և աշխատանքներ, իսկ 01.01.2015թ.-ից սկսել է հանքարդյունահանումը և արդյունահանված հանքաքարից արտադրել և իրացրել է խտանյութ:

Ստորև ներկայացվում է կանոնադրական կապիտալում կատարված ներդրումների և կազմակերպության գործունեության հասույթից առաջացած միջոցների բաշխվածությունը՝ ըստ կազմակերպության որդեգրած քաղաքականության և ծրագրի: Հարկ է նկատի ունենալ, կանոնադրական կապիտալում ներդրված գումարները փոխարկվել են, համապատասխանաբար, 01.01.2014թ. և 01.01.2015թ., և արտարժույթի փոխարժեքը հաշվարկվել է այդ օրերի համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակած փոխարժեքների հիման վրա:

Մլն դոլար

<i>Ձեռքբերման նկարագրություն</i>	<i>գումարը</i>	<i>փոխարժեքը</i>	<i>ԱԱՀ գումարը</i>
2014թ.			
Արտադրական շենքի կառուցում	5.000.000	1=405	337.567.500
Վարչական նշանակության շենքի կառուցում	6.000.000	1=405	405.081.000
Շրջակա համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին, գրադարաններին, թանգարաններին, հանրակրթական դպրոցներին մատուցված շինարարական ծառայություններ	10.000.000	1=405	675.135.000
Արտադրական սարքավորումների՝ փոխանցող հարմարանքների ձեռքբերում	50.000.000	1=405	3.375.675.000
4 հատ բեռնատար մեքենաների ձեռքբերում	4.000.000	1=405	270.054.000
3 հատ մարդատար ավտոմեքենաների	2.000.000	1=405	135.027.000

ձեռքբերում			
Արտադրական բանվորների աշխատավարձ	13.000.000	1=405	x
Վարչական ապարատի աշխատավարձ	2.000.000	1=405	x
Հումքերի և նյութերի ձեռքբերում	5.000.000	1=405	337.567.500
Փոխառության տրամադրում	3.000.000	1=405	x
Ընդհանուր	100.000.000	x	5.536.107.000
2015թ.			
Մակաբացման աշխատանքներ	25.000.000	1=475	1.979.562.500
Իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված՝ փաստաթղթերով հիմնավորված նյութական ծախսեր	15.000.000	1=475	1.187.737.500
1 հատ բեռնատար մեքենայի օտարում	100.000	1=475	7.918.250
Արտադրական բանվորների աշխատավարձ	13.000.000	1=475	x
Վարչական ապարատի աշխատավարձ	2.000.000	1=475	x
Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կադրերի պատրաստման համար կատարված ծախսեր	3.000.000	1=475	x
ՀՀ տարածքից դուրս ներկայացուցչական ծախսեր	1.500.000	1=475	x
Ներգրված վարկային միջոցների գծով վճարման ենթակա տոկոսներ	38.000.000	1=484	x
Ընդհանուր	97.600.000	x	3.175.218.250

Ծանոթագրություն.

1) 2014թ. ընթացքում տրամադրված փոխառությունը առանց տոկոսների է և պետք է վերադարձի 2016թ. ընթացքում,

2) 2015թ. Իրացված արտադրանքի արտադրության հետ անմիջականորեն կապված՝ փաստաթղթերով հիմնավորված նյութական ծախսերի գծով ԱԱՀ գումարները, ըստ եռամսյակների, ունեն հետևյալ բաշխվածությունը՝

1-ին եռամսյակ- 415.708.125

2-րդ եռամսյակ- 296.934.375

3-րդ եռամսյակ- 178.160.625

4-րդ եռամսյակ- 296.934.375

3) Օտարված բեռնատար ավտոմեքենայի սկզբնական արժեքի տեսակարար կշռի տվյալ խմբի մեջ մտնող շահագործման ժամկետ ունեցող տրանսպորտային միջոցների սկզբնական արժեքների հանրագումարում կազմում է 10 տոկոս:

Կազմակերպության կողմից 2015թ. ընթացքում իրացվել է վերջինիս կողմից արդյունահանված հանքաքարից ստացված խտանյութը 95.800.000.000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով (ներառյալ՝ ԱԱՀ): Ընդ որում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար խտանյութի իրացման շրջանառությունը կազմել է հետևյալ չափերով

2015թ.		
<i>Եռամսյակ</i>	<i>Իրացման շրջ.</i>	<i>ԱԱՀ գումար</i>
1-ին եռամսյակ	21.200.000.000	4.240.000.000
2-րդ եռամսյակ	19.525.000.000	3.905.000.000
3-րդ եռամսյակ	36.600.000.000	7.320.000.000
4-րդ եռամսյակ	2.505.140.000	501.028.000
Ընդհանուր	95.800.000.000	15.969.860.000

Հարց՝ որքա՞ն է կազմում՝

- 1) կազմակերպության 2014 և 2015 թվականների հարկվող շահույթը և շահութահարկի գումարը,
- 2) 2015թ. յուրաքանչյուր եռամսյակի համար ԱԱՀ պարտավորության գումարը
- 3) 2015 թվականի համար «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթիի գումարը:

1-ին հարցի պատասխան

	2014-հարկվող շահույթ և շահութահարկ	0
	2015-հարկվող շահույթ	34,494,209,148
	2015- շահութահարկ	6,898,841,830

2-րդ հարցի պատասխան

	2015 ղտ	կտ	
սկզբ մն.	250,961,449	0	
1-ին եռ	415,708,125	4,247,918,250	3,581,248,676
2-րդ եռ	296,934,375	3,905,000,000	3,608,065,625
3-րդ եռ	178,160,625	7,320,000,000	7,141,839,375
4-րդ եռ	296,934,375	501,028,000	204,093,625
ընդհ	1,438,698,949	15,973,946,250	
		14,535,247,301	

3-րդ հարցի պատասխան

Ռոյալթիի գումար՝ **12,070,800,000**